

ՄԵՆՔ ՀԱՆՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ

հասարակական կազմակերպություն

Սոցիալական կինոքննարկումների և թեմատիկ
հանդիպումների ակումբ

ԵՐԵՎԱՆ 2010

Հարգելի շահառուներ,

Այս գրքույկում կգտենք օգտակար տեղեկատվություն այն միջոցառումների վերաբերյալ, որոնք «Մենք հանուն քաղաքացիական հավասարության» ՀԿ-ը պատրաստվում է կազմակերպել 2010 թվականի ընթացքում: Միջոցառումներն իրականացվում են «ՊՈՇՅԻՍ – Հայաստան» ծրագրի շրջանակներում և ֆինանսավորվում են Նիդերլանդների Թագավորության Արտաքին Գործերի Նախարարության կողմից:

Հուսով ենք, որ մեր միջոցառումները կունենան իրենց ուրույն ներդրումը Հայաստանում մարդու իրավունքների և ժողովրդավարության հաստատման գործընթացում, ինչպես նաև կնպաստեն համայնքի սոցիալ – հոգեբանական խնդիրների լուծմանը և ընդհանուր տեղեկացվածության բարձրացմանը:

Գրքույկում կգտենք անհրաժեշտ տեղեկություններ յուրաքանչյուր միջոցառման վերաբերյալ, այդ թվում նաև՝ շահառուների նախընտրելի խումբը և անցկացման ժամանակը: Միջոցառմանը մասնակցելու հայտ կարող եք ներկայացնել միջոցառման անցկացման օրվանից 10 աշխատանքային օր առաջ՝ գրանցվելով աուքիոչ աշխատակիցների մոտ:

Մաղթում ենք Ձեզ հետաքրքիր, բազմաբովանդակ և բեղուն աշխատանքային գործընթաց:

Հարգանքներով՝

«Մենք հանուն քաղաքացիական հավասարության» ՀԿ-ի
Սոցիալ – հոգեբանական ծրագրերի ղեկավար Ա. Սիմոնյան

ՏՂԱՄԱՐԴԻԿ ՈՐՊԵՄ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՈՒՅԹ

Միջոցառման օրը և ժամը՝ 18 հունվար, 18:00
Նախընտրելի շահառու խումբը՝ ԳԵ համայնքի ներկայացուցիչներ



Թողարկման տարեթիվը	2006
Արտադրող երկիրը	ԱՄՆ
Ֆիլմի կարգախոսը	Սեքսը գին ունի, սերը՝ արժեք
Գլխավոր դերերում	Դ. Մագիլար, Ջ. Յոնսոն, Պ. Բոչո
Ռեժիսոր	Կ. Ալան Բրոք
Ժանրը	դրամա
Տևողությունը	90 րոպե

Իքսն ուսանող է, միևնույն ժամանակ նա նաև գեյ առևտրային սեքս աշխատող է: Նրա հիմնական այցելուն մի ատամնաբույժ է: Համալսարանն ավարտելուց հետո Իքսը շարունակում է իր առևտրային սեքս ծառայությունները միայն նախկին այն տասներկու հաճախորդների համար, ովքեր պատրաստ էին մեծ գումարներ վճարել: Իքսն իր բնակարանը կիսում է երկու ընկերների հետ՝ առանց նրանցից վարձավճար վերցնելու: Ընկերներից մեկը՝ Էնդրիուն, աշխատում է տեսաֆիլմերի խանութում, մյուսը՝ 18-ամյա Ջոնը, անկանոն սեռական հարաբերությունների մեջ է տարբեր մարդկանց հետ: Իքսի հաճախորդներից մեկը մահանում է և նա սկսում է հանդիպել 79-ամյա Գրեգորիի հետ՝ դիտարկելով նրան որպես մահացած հաճախորդին փոխարինող:

ՏՐԱՆՍԱՄԵՐԻԿԱ

Միջոցառման օրը՝ 25 փետրվար, 18:00

Նախընտրելի շահառու խումբը՝ ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչներ



Թողարկման տարեթիվը	2005
Արտադրող երկիրը	ԱՄՆ
Ֆիլմի կարգախոսը	Ընտրություն անելու ժամանակն է
Գլխավոր դերերում	Ֆ. Հաֆմեն, Կ. Ջեզերս, Ֆ. Ֆենագան, Գ. Գրին
Ռեժիսոր	Դ. Տակեր
Ժանրը	դրամա
Տևողությունը	103 րոպե

Բրին փոխգեները է: Նա գումար է հավաքում վերջին վիրահատության համար՝ լիարժեք կին դառնալու նպատակով: Աշխատելով երկու տարբեր տեղերում՝ նա յուրաքանչյուր ցեմտ կուտակում է միմիայն այդ վիրահատության համար: Մի օր նրան զանգահարում է Թոբին՝ տարիներ առաջ նրա հերթական ակնթարթային սեռական կապերից ծնված որդին: Թոբին Նյու-Յորքի բանտում է, և Բրին Լոս-Անջելեսից մեկնում է որդու մոտ՝ նրան բանտից ազատելու: Սկզբից Բրին կասկածում է՝ արդյոք արժե՞ դա անել այնպիսի մեկի համար, ում նա ընդհանրապես չի ճանաչում, թեև բժիշկը խորհուրդ է տալիս նրան չվախենալ իր իսկ սեփական անցյալից: Առանց որևէ բացատրության՝ ոստիկանությունում Թոբինն հանձնում են Բրինին: Բրին հասկանում է, որ որդու միակ ցանկությունը փախուստն է և ավտոստոպով Լոս-Անջելես հասնելը: Բրին համոզում է որդուն միասին մեկնել Լոս-Անջելես: Ճանապարհն երկար է, և այդ ընթացքում նրանք ավելի մոտիկից են միմյանց ճանաչում:

ԵԹԵ ՊԱՏԵՐԸ ԿԱՐՈՂԱՆԱՅԻՆ ԽՈՍԵԼ 2

Միջոցառման օրը՝ 8 մարտ, 18:00

Նախընտրելի շահառու խումբը՝ ԼԵ համայնքի ներկայացուցիչներ



Թողարկման տարեթիվը	2000
Արտադրող երկիրը	ԱՄՆ
Ֆիլմի կարգախոսը	Կանայք սիրում են կանանց
Գլխավոր դերերում	Շ. Ստրոն, Վ. Ռեդգրեյվ, Մ. Սելդես
Ռեժիսոր	Ջ. Անդերսոն, Մ. Կուլիջ, Է. Խեչ
Ժանրը	մելոդրամա
Տևողությունը	96 րոպե

Երեք կին նկարահանել են երեք նովել իրենց սիրո և սիրային հարաբերությունների մասին, որոնցում կա ամեն ինչ, բացի... տղամարդկանցից:

ՎԱՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Միջոցառման օրը՝ 9 ապրիլ, 18:00

Նախընտրելի շահառու խումբը՝ ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչներ



Թողարկման տարեթիվը	2000
Արտադրող երկիրը	Իսպանիա
Ֆիլմի կարգախոսը	-
Գլխավոր դերերում	Գ. Բեննա, Ֆ. Մարտինես, Դ. Խիմենես Կաչո
Ռեժիսոր	Պ. Ամորոլար
Ժանրը	մելոդրամա, դետեկտիվ
Տևողությունը	106 րոպե

Ռեժիսոր Էնրիկե Մեռանոյի ձեռքն է ընկնում տարօրինակ մի սցենար: Կարդալուց հետո նա պարզում է, որ դա իր կյանքի պատմությունն է վաղեմի ընկերոջ՝ Իգնասիոյի և իր սիրո մասին: Ռեժիսորը համաձայնվում է նկարել այդ սցենարով ֆիլմ, որի գլխավոր դերի համար հավակնում է մի երիտասարդ, ով ներկայանում է հենց որպես Իգնասիո: Բայց հետաքննությունից հետո ռեժիսորը պարզում է, որ Իգնասիոն անհայտ պայմաններում մահացել է, իսկ երիտասարդ դերասանի դիմակի տակ թաքնված է Իգնասիոյի գույզ եղբայրը...

ՀԱՐՎԻ ՄԻԼԿ

Միջոցառման օրը՝ 17 մայիս, 18:00

Նախընտրելի շահառու խումբը՝ ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչներ




Թողարկման տարեթիվը	2008
Արտադրող երկիրը	ԱՄՆ
Ֆիլմի կարգախոսը	Նրա կյանքը փոխեց պատմությունը, նրա տղամարդկությունը փոխեց կանգը
Գլխավոր դերերում	Շ. Պեն, Է. Հիրշ, Դ. Բրոլին
Ռեժիսոր	Գ. Վան Սենտ
Ժանրը	մելոդրամա, կենսագրություն, պատմական
Տևողությունը	128 րոպե

Այս ֆիլմը ԱՄՆ-ում առաջին այն քաղաքական գործչի մասին է, ով բացահայտ հայտարարեց իր նույնասեռական կողմնորոշվածության վերաբերյալ: Նա աշխատանքի անցավ քաղաքապետարանում և պայքարում էր ԼԳԵՓ շահերի պաշտպանության համար:

ՔԱՍԵԼԵՈՆ

Միջոցառման օրը՝ 11 հունիս, 18:00

Նախընտրելի շահառու խումբը՝ ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչներ



Թողարկման տարեթիվը	2001
Արտադրող երկիրը	Ֆրանսիա
Ֆիլմի կարգախոսը	
Գլխավոր դերերուն	Դ. Օտոյ, Ժ. Դեպարտիս
Ռեժիսոր	Ֆ. Վեմեր
Ժանրը	կատակերգություն
Տևողությունը	84 րոպե

Ֆրանսուա Պիանոնը աշխատում է հակաբեղմնավորիչ պարագաներ արտադրող գործարանում: Նա շատ համեստ է, փորձում է աննկատ լինել և այդ ամենի պատճառով էլ միշտ անհարմար վիճակներում է հայտնվում: Սակայն նա պատրաստ է հաղթահարելու այդ ամենը, միայն թե շրջապատի մարդկանց անհանգստություն չպատճառի:

Մի անգամ նա լսում է իր գործընկերների գրույցը, որից պարզ է դառնում, որ իրեն պետք է հեռացնեն աշխատանքից: Ֆրանսուան հուսալքված դուրս է գալիս պատշգամբ՝ կյանքին վերջ տալու, սակայն նրան խանգարում է հարևանը: Իմանալով Ֆրանսուայի տառապանքների պատճառը՝ հարևանը գործարան է ուղարկում կեղծ նկարներ, որոնցում Ֆրանսուան նույնասեռականների բարում էր: Պիանոնի ոչ ավանդական սեռական կողմնորոշվածության մասին լուրը տարածվում է ամբողջ գործարանով մեկ, և տնօրենը հասկանում է, որ չի կարող նրան հեռացնել աշխատանքից, քանի որ կարող է մեղադրվել սեռական փոքրամասնությունների նկատմամբ խտրականության դրսևորման մեջ: Պիանոնի կյանքը կտրուկ փոխվում է, նրա նկատմամբ սկսում են հետաքրքրություն ցուցաբերել աշխատակիցները, որդին և նույնիսկ, նախկին կինը:

ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ՄԱՇԿ

Միջոցառման օրը՝ 16 հուլիս, 18:00

Նախընտրելի շահառու խումբը՝ ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչներ



Թողարկման տարեթիվը	2004
Արտադրող երկիրը	ԱՄՆ, Նիդերլանդներ
Ֆիլմի կարգախոսը	Երկու տղա՝ մեկը չի կարող հիշել, մյուսը չի կարող մոռանալ
Գլխավոր դերերուն	Դ. Գորդոն-Լեվիթ, Բ. Կորմենտ
Ռեժիսոր	Ս. Խեյմ
Ժանրը	դրամա, դետեկտիվ
Տևողությունը	107 րոպե

Երբ Բրայենը ութ տարեկան էր, մի օր նա արթնացավ Կանգասի իրենց տանը հարող նկուղում: Նրա քթից արյուն էր հոսում, և նա պատկերացում անգամ չուներ, թե ինչպես էր այնտեղ հայտնվել: Այդ դեպքից հետո նրա կյանքը կտրուկ փոխվեց. նա վախենում էր մթից, գիշերամիզում էր անկողնում և սարսափելի երազներ է տեսնում:

Հիմա Բրայենն արդեն տասնութ տարեկան է: Տասնութ է նաև Նիլը, և նա ցանկանում է նույն սիրային հարաբերություններն ունենալ, ինչ ունեցել էր ութ տարեկանում իր լիզայի մարզչի հետ: Երբ երիտասարդները ծանոթանում են, նրանք հասկանում են, որ իրադարձությունները, որոնք ազդում էին իրենց վրա մանկությունում, իրականում թվացյալ էին...

ՈՐԱԽՆԵՐԸ

Միջոցառման օրը՝ 2 օգոստոս, 18:00

Նախընտրելի շահառու խումբը՝ Փ համայնքի ներկայացուցիչներ



Թողարկման տարեթիվը	2004
Արտադրող երկիրը	Ռուսաստան
Ֆիլմի կարգախոսը	Ոչ ավանդական կ'ատակերգություն
Գլխավոր դերերում	Վ. Նավասարդ, Ռ. Կոզլովսկի, Ա. Կլիմուշկին, Ի. Նիկոլան, Ի. Ղապլունայտե
Ռեժիսոր	Ֆ. Սիխալով
Ժանրը	կատակերգություն
Տևողությունը	93 րոպե

Նրանք հինգն են: Ի ծնե տղամարդ են, մասնագիտությամբ՝ տրավլիստի դերասաններ: Շքեղ կանացի հագուստով և հմայիչ դիմահարդարանքով՝ նրանք գիշերները փայլում են ակումբի բեմում՝ երկրպագուների ծափերի տեղատարափի ներքո: Իսկ առավոտյան սկսվում է լրիվ ուրիշ կյանք: Բեմում և կյանքում նրանք միանման չեն: Նրանք ունեն տարբեր բնավորություններ, սովորույթներ և երազանքներ, սակայն կյանքի տարբեր իրադարձությունները նրանց կարճ ժամանակով համախմբել են: Շրջապատող աշխարհը ոչ միշտ է հասկանում և հաճախ չի ընդունում նրանց նմանների: Սակայն նրանք ունեն իրենց հորինած աշխարհը՝ գունեղ, ուրախ, զվարճալի, որի անունն է տոն:

ՋԻԱ

Միջոցառման օրը՝ 25 սեպտեմբեր, 18:00

Նախընտրելի շահառու խումբը՝ ԼԵ համայնքի ներկայացուցիչներ



Թողարկման տարեթիվը	1998
Արտադրող երկիրը	ԱՄՆ
Ֆիլմի կարգախոսը	Չափազանց գեղեցիկ է մահանալու համար
Գլխավոր դերերում	Ա. Ջոլի, Է. Միտչել
Ռեժիսոր	Մ. Քրիստոֆեր
Ժանրը	մելոդրամա, կենսագրական
Տևողությունը	120 րոպե

Ֆիլմը հիմնված է իրական փաստերի վրա՝ համաշխարային հայտնի սուպերմոդել Ջիա Մարի Կարանջիի կյանքի պատմությունն է: 70-ականների վերջում այս կնոջը անվանում էին համաշխարային բեմահարթակի թագուհի: Մինչ այդ, նա հասարակ մի կին էր և քաղաքի արվարձաններից մեկում գտնվող սրճարանում աշխատում էր որպես աման լվացող:

Դառնալով ճանաչված՝ Ջիան, ցավոք, չկարողացավ լիարժեք վայելել իր համբավը: 80-ականների վերջում նա մահանում է ՉԻԱՀ-ից: Ծննդի և մահվան միջև ընկած էր միայն կարճ կյանքի մի շունչ, որում կար ամեն ինչ՝ թռիչք և անկում, կոտրված սեր, փառք, փող և թմրանյութեր:

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Միջոցառման օրը՝ 15 հոկտեմբեր, 18:00

Նախընտրելի շահառու խումբը՝ ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչներ



Թողարկման տարեթիվը	2003
Արտադրող երկիրը	ԱՄՆ
Ֆիլմի կարգախոսը	Անարոնն արդյուն է՝ Քրիստիանը խաղում է...հակառակ կողմը՝ գրավում
Գլխավոր դերերում	Ս. Սանդլիս, Ու. Ռեմսի, Ռ. Ջոնսոն
Ռեժիսոր	Ս. Ջեյ Կոկս
Ժանրը	մեղրամաս, կատակերգություն
Տևողությունը	107 րոպե

Քրիստիանը գեյ է Լոս-Անջելեսից: Նա ունի կրքոտ, հասուն մարմին, հիասքանչ տեսք: Նա սիրում է, առանց մտածելու մեկը մյուսի ետևից փոխում է իր գուգրնկերներին: Շուտով նա տեղեկանում է, որ իրենց թաղամասում բնակություն են հաստատել մի խումբ երիտասարդ մորմոնականներ (մորմոնականությունը ամենահին կրոնական աղանդներից մեկն է ԱՄՆ-ում և հայտնի է իր խիստ բարբերով): Քրիստիանը իր ընկերների մոտ պարծենում է, որ կկարողանա սեռական հարաբերություն ունենալ այդ մորմոններից մեկի հետ:

ՈՒՂՂԱԿԻ ՄԻՐՈ ՀԱՐՑ

Միջոցառման օրը՝ 5 նոյեմբեր, 18:00

Նախընտրելի շահառու խումբը՝ ԳԵՓ համայնքի ներկայացուցիչներ



Թողարկման տարեթիվը	2000
Արտադրող երկիրը	Ֆրանսիա, Բելգիա
Ֆիլմի կարգախոսը	Արդյո՞ք մենք սիրում ենք մեր երեխաներին այնքան, որքան նրանք կցանկանային
Գլխավոր դերերում	Ս. Տուվենին, Ա.Գ. Ֆիլի, Ե. Ղարլան
Ռեժիսոր	Ք. Ֆորե
Ժանր	դրամա
Տևողությունը	88 րոպե

Ֆիլմը Լորանի և Սեդրիկի հարաբերությունների մասին է: Լորանը 23 տարեկան է. նա գեյ է, սակայն թաքցնում է այդ փաստը իր հոմոֆոբ ծնողներից: Լորանը գյուղակաղենիայի ուսանող է և կիսում է իր սեռյակը դասընկերուհու հետ: Վերջինս սիրահարված է Լորանին և համաձայնվել է Լորանի ծնողների մոտ գուգրնկերուհու դեր խաղալ: Մի անգամ Լորանը ծանոթանում է Սեդրիկի հետ և սիրահարվում նրան: Լորանին հակառակ՝ Սեդրիկը չի թաքցնում, որ գեյ է և նրան նյարդայնացնում է Լորանի վարքը:

ՖԻԼԱԳԵԼՖԻԱ

Միջոցառման օրը՝ 01 դեկտեմբեր, 18:00

Նախընտրելի շահառու խումբը՝ ԼԳԵՓ համայնքի ներկայացուցիչներ



Թողարկման տարեթիվը	1993
Արտադրող երկիրը	ԱՄՆ
Ֆիլմի կարգախոսը	Անհատական կյանքը փոխելու համար անհրաժեշտ է համակարգի փոփոխություն
Գլխավոր դերերում	Թ. Հենքս, Դ. Վաշինգտոն, Ա. Բանդերաս
Ռեժիսոր	Ջ. Ղեմմե
Ժանր	դրամա
Տևողությունը	125 րոպե

Երկու գլխավոր հերոսները միմյանցից այնքան տարբեր են, որքան սպիտակը՝ սևից: Նրանց բաժանում է մաշկի գույնը, հասարակական դիրքը, սեռական կողմնորոշվածությունը և մահացու հիվանդությունը: Բայց ամեն մեկը ծառայում է օրենքին և պայքարում ցանկացած անհավասարության դեմ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՂԱՄԱՐԳԻԿ ՈՐՊԵՍ ՀԱՏՈՒԿ ՄՇԱԿՈՒՅԹ.....	3
ՏՐԱՆՍԱՄԵՐԻԿԱ	4
ԵԹԵ ՊԱՏԵՐԸ ԿԱՐՈՂԱՆԱՅԻՆ ԽՈՍԵԼ 2.....	5
ՎԱՏ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ.....	6
ՀԱՐՎԻ ՄԻԼԿ.....	7
ՔԱՄԵԼԵՈՆ.....	8
ԱՌԵՂԾՎԱԾԱՅԻՆ ՍԱՇԿ	9
ՈՐԱԽՆԵՐԸ.....	10
ՋԻԱ.....	11
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ.....	12
ՈՒՂԱԿԻ ՍԻՐՈ ՀԱՐՑ	13
ՖԻԼԱԳԵԼՖԻԱ.....	14

ՄԵՆՔ ՀԱՆՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ

հասարակական կազմակերպություն

Սոցիալական կինոքննարկումների և
թեմատիկ հանդիպումների ակումբ

Ստորագրված է տպագրության՝ 06.05.2010թ.

Չափսը՝ 60x84 1/16:

Ծավալը՝ 1.0 տպ.մամուլ:

Տպաքանակը՝ 300:

«Մենք հանուն քաղաքացիական հավասարության» ՀԿ